ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 27.02.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/16

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Մարի Ստեգ» ՍՊԸ-ի կողմից 08.02.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/16 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Մարի Ստեգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Մարի Ստեգ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 08.02.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ գրավոր թարգմանության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՕԲԹ-ԳՀԾՁԲ-18/13» ծածկագրով գնանշման հարցման

ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ): Սույն Ընթացակարգով հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված 2017թ. փետրվարի 9-ը, ժամը 11:00-ն:

Ընթացակարգի առարկան է հանդիսանում գրավոր թարգմանության ծառայությունների ձեռքբերումը (հայերեն-անգլերեն-ռուսերեն): Ընթացակարգը հայտարարվել է որպես մեկ չափաբաժին (գրավոր թարգմանության ծառայությունների ձեռքբերումը (հայերեն-անգլերեն-ռուսերեն)): Մասնավորապես, Հրավերի Հավելված 4-ը՝ գնային առաջարկը ներկայացված է հետևյալ տեսքով՝

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	***Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>			

Ընթացակարգի հրավերի «ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ» վերտառությամբ 2-րդ բաժնի 2.5 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

բ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պահանջը:

Համաձայն Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ի՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի», սահմանվել է հետևյալը՝

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության						
հրավերո	գնումների	տեխնիկական բնութագիրը	չափմա	ընդհա	ընդհանու	մատուցման

վ նախատեսված չափաբաժնի համարը	պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)		ն միավորը	նուրգինը /ՀՀ դրամ	ր քանակը	հասցեն	Ժամկետը**
1	79531100/1	Հայերեն, անգլերեն, և ռուսերեն լեզուներով թարգմանությունների իրականացում /հայերեն-անգլերեն, անգլերեն-հայերեն, հայերեն-ռուսերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-ռուսերեն, ռուսերեն-անգլերեն /այլ լեզուների իմացությունը ցանկալի է/: Առնվազն 3 տարվա համապատասխան աշխատանքային փորձ: Օրվա ցանկացած պահի թարգմանություն կատարելու հասանելիություն, թատրոնի թեմատիկ նյութերի, իրավաբանական փաստաթղթերի, մամլո հաղորդագրությունների և ազատ ոճի թարգմանությունների իրականացում: Թարգմանությունների ծառայությունները պետք է մատուցվեն կնքվող պայմանագրի կնքման օրվանից հաշված, մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը (ներառյալ)՝ ըստ պատվիրատուի ներկայացրած պահանջի: Ծառայությունները պետք է մատուցվեն, պատվիրատուի ներկայացրած պահանջի օրվանից հաշված:	դրամ	-	1	Թումանյան 54	Պայմանագիր կնքման օվանից մինչև 2018 թ դեկտեմբերի 30-ը Պատվիրատուի ներկայացման պահանջի

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 64-րդ կետի համաձայն՝

մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով նախատեսված՝ «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

2) եթե հրավերով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա՝

ա. հրավերով պահանջվում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնի պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները՝ հետևյալ ձևով՝

Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների				
անունը, ազգանունը	որակավո-րումը	աշխատանքային փորձը		գործատուի անվանումը
		ժամանա-կահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	
1	2	3	4	5
1.				
2.				
..				

բ. աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունների՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:

Ընկերությունը գտնում է, որ «ՕԲԹ-ԳՀԾՁԲ-18/13» ծածկագրով գնանշման հարցման Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից սույն մրցույթի հրավերը կազմելիս՝ թույլ են տրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերի, ինչպես նաև Կարգի 64-րդ կետի պահանջների խախտում, մասնավորապես.

1. Հրավերի Հավելված 4-ը՝ գնային առաջարկն, առաջարկվում է ներկայացնել մեկ չափաբաժնով: «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի» համաձայն՝ պահանջվում է կատարել՝ հայերեն-անգլերեն, անգլերեն-հայերեն, հայերեն-ռուսերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-ռուսերեն, ռուսերեն-անգլերեն լեզուներով գրավոր թարգմանություն: Այս կապակցությամբ պետք է նշել, որ Պատվիրատուն միավորելով տարբեր բարդության տարբեր լեզուներով թարգմանությունները մեկ չափաբաժնի մեջ, խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերի պահանջների խախտումներ: Բանն այն է, որ նման դեպքում անհնար է ներկայացնել մեկ միասնական գնային առաջարկ՝ հայերեն-անգլերեն, անգլերեն-հայերեն, հայերեն-ռուսերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-ռուսերեն, ռուսերեն-անգլերեն լեզուներով գրավոր թարգմանությունների համար, եթե տարբեր լեզուների շրջանակներում կատարվող գրավոր թարգմանություններն ունեն տարբեր շուկայական արժեքներ: Ընկերությունը գտնում է, որ Պատվիրատուն պետք է տարբեր լեզուների թարգմանությունները հայտարարեր տարբեր չափաբաժիններով հետևյալ տեսքով՝

1-ին չափաբաժին՝ հայերեն-անգլերեն, անգլերեն-հայերեն.

2-րդ չափաբաժին՝ հայերեն-ռուսերեն, ռուսերեն-հայերեն.

3-րդ չափաբաժին՝ անգլերեն-ռուսերեն.

4-րդ չափաբաժին՝ ռուսերեն-անգլերեն:

Նման դեպքում մասնակցության հայտ ներկայացնող ընկերությունները հնարավորություն կունենան յուրաքանչյուր չափաբաժնով նախատեսված ծառայությունների կատարման համար ներկայացնեն համապատասխան լեզուների թարգմանության գնային առաջարկ: Օրինակ, հայերեն-անգլերեն կամ անգլերեն-ռուսերեն թարգմանությունները ակնհայտորեն ունեն տարբեր արժեքներ և չեն կարող միավորվել մեկ չափաբաժնի մեջ:

2. Ինչպես արդեն նշվել է, մրցույթի հրավերի «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի բաժնում որևէ պահանջ սահմանված չէ, մինչդեռ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում» նշված է հետևյալը՝ առնվազն 3 տարվա համապատասխան աշխատանքային փորձ: Մինչդեռ, մրցույթի հրավերի

հավելված 1-ով՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում» Պատվիրատուն պետք է նկարագրի ձեռք բերվող ծառայությունների նկարագիրը, այլ ոչ թե մասնակցին ներկայացվող «Աշխատանքային ռեսուրսներ» կամ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշներին վերաբերող տվյալներ: Վերոհիշյալ դիրքորոշումը արտահայտել է նաև ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը իր 29.01.2018թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/04 որոշմամբ: Բացի այդ, սահմանելով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշ, այն անհրաժեշտ է համապատասխանեցնել Կարգի 64-րդ կետի պահանջներին, այլ չշարադրել ազատ և ոչ հստակ ոճով:

3. «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում» նշված է հետևյալը՝ «Ծառայությունները պետք է մատուցվեն, պատվիրատուի ներկայացրած պահանջի օրվանից հաշված»: Այս ձևակերպումում բացակայում է դրույթը, թե պատվիրատուի ներկայացրած պահանջի օրվանից հաշված ինչ ժամանակահատվածում ծառայությունները պետք է մատուցվեն:

Նման փաստական հանգամանքների պայմաններում Ընկերությունը գտնում է, որ Հրավերի «ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ» վերտառությամբ 2-րդ բաժնի 2.5 կետի 4-րդ ենթակետը, Հավելված 4-ը՝ գնային առաջարկը, ինչպես նաև «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը» պետք է վերանայվեն և համապատասխանեցվեն գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին:

Օրենքի 29-րդ հոդվածը նախատեսում է հրավերում փոփոխություններ կատարելու հնարավորությունը:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերության համաձայն՝ Խորհուրդը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Հաշվի առնելով, որ սույն Ընթացակարգի հայտերի ներկայացման ժամկետը դեռևս ավարտված չէ (սահմանված 9 փետրվարի, ժամը 11:00-ն), ուստի ղեկավարվելով Օրենքի ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերության պահանջներով՝ Ընկերությունը բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է

1. Պարտավորեցնել «ՕԲԹ-ԳՀԾՁԲ-18/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել գնման ընթացակարգը, կամ՝

2. Պարտավորեցնել «ՕԲԹ-ԳՀԾՁԲ-18/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին հրավերի «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշները բաժնում, Հավելված 4 գնային առաջարկում, ինչպես նաև «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում» կատարել համապատասխան փոփոխություններ՝ նախատեսելով առանձին չափաբաժիններ և հրավերը համապատասխանեցնել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին:

«Մարի Ստեգ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 13.02.2018թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) Խորհրդին ուղղված 12.02.2018թ. թիվ 21168 գրությամբ հայտնել է, որ գրավոր թարգմանությունների ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարված «ՕԲԹ-ԳՀԾՁԲ-18/13» ծածկագրով գնանշման հարցման

ընթացակարգի գնման առարկայի տեխնիկական բնութագիրը գրվել է ելնելով Պատվիրատուի պահանջներից, համապատասխանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքին, չի հանգեցնում գնումների գործընթացում խոչընդոտների առաջացմանը և ապահովում է հավասար մրցակցային պայմաններ մասնակիցների համար:

Ընթացակարգի գնման առարկան, համաձայն Օրենքի 25-րդ հոդվածի, չունի առանձին բնութագրեր, այդ իսկ պատճառով չի բաժանվել առանձին չափաբաժինների:

Ընկերությունը, համաձայն Օրենքի 29-րդ հոդվածի, իրավունք ուներ հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն 5 օրացույցային օր առաջ գրավոր պահանջել հրավերի պարզաբանում:

Ընթացակարգի հրավերի «ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ» 2-րդ բաժնի 2.5 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն աշխատանքային ռեսուրսներ չի պահանջում:

«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ն ապահովում է թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական գնման գործընթացի կազմակերպում:

«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 13.02.2018թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի կողմից «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար գրավոր թարգմանության

ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՕԲԹ-ԳՀԾՁԲ-18/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերով նախատեսվել է գնման առարկայի հետևյալ տեխնիկական բնութագիրը.

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	մատուցման ժամկետը**
1	79531100/1	Հայերեն, անգլերեն, և ռուսերեն լեզուներով թարգմանությունների իրականացում /հայերեն-անգլերեն, անգլերեն-հայերեն, հայերեն-ռուսերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-ռուսերեն, ռուսերեն-անգլերեն/այլ լեզուների իմացությունը ցանկալի է: Առնվազն 3 տարվա համապատասխան աշխատանքային փորձ Օրվա ցանկացած պահի թարգմանություն կատարելու հասանելիություն, թատրոնի թեմատիկ նյութերի, իրավաբանական փաստաթղթերի, մամլո հաղորդագրությունների և ազատ ոճի թարգմանությունների իրականացում: Թարգմանությունների ծառայությունները պետք է մատուցվեն, կնքվող պայմանագրի կնքման օրվանից հաշված, մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը(ներառյալ)՝ ըստ պատվիրատուի ներկայացրած պահանջի: Ծառայությունները պետք է մատուցվեն, պատվիրատուի ներկայացրած պահանջի օրվանից հաշված:	Պայմանագրի կնքման օվանից մինչև 2018 թ դեկտեմբերի 30-ը Պատվիրատուի ներկայացման պահանջի

3. Ընթացակարգի հրավերով նախատեսվել է հավելված թիվ 4 գնային առաջարկի հետևյալ օրինակելի ձևը.

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	***Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>			

******Մասնակիցը որպես գնային առաջարկ է ներկայացնում հրավերի Հավելված 5-ով սահմանված պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված միավոր ծառայության համար առաջարկվող գինը, իսկ պայմանագիրը հետագայում կկնքվի համապատասխան հատկացված գումարի չափով՝ իսկ պայմանագրում որպես միավոր ծառայության գին կսահմանվի մասնակցի ներկայացրած գնային առաջարկը:***

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Մարի Ստեգ» ՍՊԸ-ի 08.02.2018թ. բողոքը, «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի 12.02.2018թ. թիվ 21168 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

- Բողոքի առաջին հիմքի վերաբերյալ Խորհուրդը հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-3-րդ մասերի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Օրենքի 25-րդ հոդվածի համաձայն՝

1. Մրցակցային գնման ձևերի կիրառման ժամանակ առանձին բնութագրեր ունեցող գնումները մեկ գնման գործընթացի շրջանակներում կարող են բաժանվել չափաբաժինների: Արգելվում է՝

1) մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների՝ մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով.

2) փոփոխել պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների բնութագրերը:

2. Արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:

«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի կողմից «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար գրավոր թարգմանության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՕԲԹ-ԳՀԾՁԲ-18/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով գնման առարկա գրավոր թարգմանության ծառայությունները միավորվել են մեկ չափաբաժնում և նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

տեխնիկական բնութագիրը
Հայերեն, անգլերեն, և ռուսերեն լեզուներով թարգմանությունների իրականացում ***/հայերեն-անգլերեն, անգլերեն-հայերեն, հայերեն-ռուսերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-ռուսերեն, ռուսերեն-անգլերեն/***այլ լեզուների իմացությունը ցանկալի է: Առնվազն 3 տարվա համապատասխան աշխատանքային փորձ: Օրվա ցանկացած պահի թարգմանություն կատարելու հասանելիություն, թատրոնի թեմատիկ նյութերի , իրավաբանական փաստաթղթերի, մամլո հաղորդագրությունների և ազատ ոճի թարգմանությունների իրականացում: Թարգմանությունների ծառայությունները պետք է մատուցվեն, կնքվող պայմանագրի կնքման օրվանից հաշված, մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը(ներառյալ)՝ ըստ պատվիրատուի ներկայացրած պահանջի: Ծառայությունները պետք է մատուցվեն, պատվիրատուի ներկայացրած պահանջի օրվանից հաշված:

Այսպես Ընթացակարգի տեխնիկական բնութագրով նախատեսվել է ձեռք բերել հայերեն, անգլերեն, և ռուսերեն լեզուներով թարգմանությունների իրականացման ծառայություններ: Միևնույն ժամանակ նշված ծառայության տեխնիկական բնութագրում նախատեսվել են հայերեն-անգլերեն, անգլերեն-հայերեն, հայերեն-ռուսերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-ռուսերեն, ռուսերեն-անգլերեն թարգմանության ծառայությունների ձեռքբերումը:

Հրավերի թիվ 4 հավելված գնային առաջարկը նախատեսվել է ներկայացնել մեկ չափաբաժնի համար և նշվել է, որ ***մասնակիցը որպես գնային առաջարկ է ներկայացնում հրավերի Հավելված 5-ով սահմանված պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված միավոր ծառայության համար առաջարկվող գինը, իսկ պայմանագիրը հետագայում կկնքվի համապատասխան հատկացված գումարի չափով՝ իսկ պայմանագրում որպես միավոր ծառայության գին կսահմանվի մասնակցի ներկայացրած գնային առաջարկը:***

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և ***վճարման պայմանները***՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ արգելվում է խմբավորել ***առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում***, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:

Այսպես, ուսումնասիրելով «ՕԲԹ-ԳՀԾՁԲ-18/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի տեխնիկական բնութագիրը, Խորհուրդը գտնում է, որ դրանում նշված մեկ չափաբաժնում միավորվել են տարբեր տեխնիկական բնութագրեր ունեցող գնման առարկաները, մասնավորապես նախատեսվել է ձեռք բերել հայերեն-անգլերեն, անգլերեն-հայերեն, հայերեն-ռուսերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-ռուսերեն, ռուսերեն-անգլերեն թարգմանության ծառայություններ, որոնք իրենցից ներկայացնում են տարբեր բարդություն և տարբեր շուկայական գներ ունեցող ծառայություններ: Ընդ որում՝ Ընթացակարգի հրավերի թիվ 4 հավելված գնային առաջարկի մեջ նախատեսվել է դրույթ, համաձայն որի պահանջվում է ներկայացնել տեխնիկական բնութագրում նշված միավոր ծառայության համար գին, որը տվյալ պարագայում Խորհուրդը գտնում է, որ կարող է խոչընդոտել մասնակիցների կողմից Ընթացակարգին մասնակցելու իրավունքի իրացմանը, քանի որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված ծառայություններն ունեն տարբեր շուկայական գներ, ուստի հնարավոր չէ առաջարկել միավոր ծառայության համար մեկ գին:

Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի տեխնիկական բնութագրով նախատեսված գնման առարկան ***անհրաժեշտ է բաժանել չափաբաժինների, մասնավորապես՝ հայերեն-անգլերեն և անգլերեն-հայերեն թարգմանչական ծառայությունները անհրաժեշտ է միավորել մեկ չափաբաժնի մեջ, հայերեն-ռուսերեն և ռուսերեն-հայերեն թարգմանչական ծառայություններն անհրաժեշտ է միավորել երկրորդ չափաբաժնի մեջ:***

Ինչ վերաբերում է անգլերեն-ռուսերեն և ռուսերեն-անգլերեն թարգմանչական ծառայություններն առանձին-առանձին չափաբաժինների բաժանելու վերաբերյալ բողոքաբերի պնդմանը, ապա Խորհուրդը գտնում է, որ «Մարի Ստեգ» ՍՊԸ-ն բողոքի մեջ չի հիմնավորել նշված թարգմանչական ծառայություններն առանձին չափաբաժիններում նախատեսելու անհրաժեշտության պահանջը: Հետևաբար՝ Խորհուրդն անգլերեն-ռուսերեն և ռուսերեն-անգլերեն թարգմանչական ծառայություններն առանձին չափաբաժիններում նախատեսելու կամ մեկ չափաբաժնում միավորելու անհրաժեշտության հարցի լուծումը թողնում է պատվիրատուի հայեցողությանը, հաշվի առնելով վերջիններիս շուկայական արժեքների էական տարբերության առկայության կամ բացակայության հանգամանքը:

Խորհուրդն գտնում է, որ «ՕԲԹ-ԳՀԾՁԲ-18/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի տեխնիկական բնութագիրը վերոհիշյալ հիմնավորումներով կազմված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի և 25-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին անհամապատասխան, ուստի այն, ինչպես նաև դրա հիման վրա հավելված 4 գնային առաջարկն ենթակա են փոփոխման:

- Անդրադառնալով բողոքի երկրորդ հիմքին Խորհուրդը հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող աշխատանքային ռեսուրսներ:

Կարգի 64-րդ կետը սահմանում է, որ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով նախատեսված՝ «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

2) եթե հրավերով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա՝

ա. հրավերով պահանջվում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնի պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները.

բ. աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունների՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:

Միևնույն ժամանակ նույն կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ ***եթե գնման առարկայի նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը*** կամ գնման առարկան անշարժ գույք է կամ գնման ընթացակարգը կազմակերպվում է սույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված հիմքով, ***ապա սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պահանջը չի սահմանվում հրավերով և մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.***

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

«ՕԲԹ-ԳՀԾՁԲ-18/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ընթացակարգը կազմակերպվել է ՀՀ ֆինանսների նախարարի 25.05.2017թ. «Գնանշման հարցման ձևով թղթային եղանակով կազմակերպվող անշարժ գույքի և գնումների բազային միավորի հնգապատիկը

չգերազանցող գնման հայտարարությունների և հրավերիների օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 250-Ա հրամանի համաձայն:

Միևնույն ժամանակ Ընթացակարգը կազմակերպվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսելը: Դրա հետ մեկտեղ Խորհուրդն արձանագրում է նաև, որ սույն ընթացակարգը հայտարարվելուց հետո նախատեսված ֆինանսական միջոցների չափը չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 2-րդ կետի 2.4 ենթակետի 4-րդ պարբերությամբ նախատեսվել է, որ մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող աշխատանքային ռեսուրսներ:

Միևնույն ժամանակ հրավերի ՄԱՍ Ի-ի 2-րդ կետի 2.5 ենթակետի 2.4 պարբերությամբ սահմանվել է, որ ***«Աշխատանքային ռեսուրսներ»*** որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

<u>բ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պահանջը:</u>

Հետևաբար, վերոհիշյալ նորմերից բխում է, որ մասնակցի կողմից պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ***աշխատանքային ռեսուրսների առկայության մասին սահմանված կարգով հայտարարություն ներկայացնելը բավարար է մասնակցի որակավորումը «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշին համապատասխան գնահատելու համար:***

Դրա հետ մեկտեղ Կարգի 64-րդ կետի 3-րդ ենթակետը սահմանում է, որ «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով պահանջը չի սահմանվում հրավերով և մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին, ուստի Խորհուրդը գտնում է, որ տվյալ դեպքում Ընթացակարգի հրավերի ***տեխնիկական բնութագրում առնվազն երեք տարվա աշխատանքային***

փորձի մասով պահանջը չի կարող սահմանվել: Հետևաբար Խորհուրդը գտնում է, որ նշված պահանջը անհրաժեշտ է հանել հրավերի տեխնիկական բնութագրից:

- Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում նախատեսվել է, որ ծառայությունները պետք է մատուցվեն պատվիրատուի ներկայացրած պահանջի օրվանից հաշված:

Միևնույն ժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ նշված չէ, թե պատվիրատուի ներկայացրած պահանջի օրվանից հաշված ինչ ժամկետներում պետք է մատուցվի համապատասխան ծառայությունը: Այս տեսանկյունից Խորհուրդը գտնում է, որ սույն դրույթն անորոշ է, քանի որ սահմանված չէ հստակ ժամկետ կամ ժամկետներ, որի ընթացքում կատարողը պարտավորվում է գնման պայմանագրի համաձայն մատուցել համապատասխան ծառայությունները: Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրում անհրաժեշտ է նախատեսել այն ժամկետը կամ ժամկետները, որի ընթացքում կատարողը պարտավորվում է պատվիրատուին մատուցել պայմանագրով նախատեսված ծառայությունը: Հիշյալ դրույթի սահմանումը անհրաժեշտ է նաև կողմերի իրավունքները և պարտականությունները հստակեցնելու համար, ինչպես նաև կատարողի՝ պայմանագրով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը հետագայում գնահատելու համար:

Այսպիսով Խորհուրդը գտնում է, որ «ՕԲԹ-ԳՀԾՁԲ-18/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում վերոհիշյալ հիմնավորումների շրջանակներում անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություններ և այն համապատասխանեցնել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին, ուստի Խորհուրդը գտնում է, որ «Մարի Ստեգ» ՍՊԸ-ի բողոքը սույն մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

«Մարի Ստեգ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 08.02.2018թ. ներկայացված բողոքը բավարարել.

պարտավորեցնել «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար գրավոր թարգմանության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՕԲԹ-ԳՀԾՁԲ-18/13» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընթացակարգի հրավերում կատարել սույն որոշման մեջ նշված համապատասխան փոփոխությունները և հրավերը համապատասխանեցնել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**